

ՀԱՄԱՌՕՏՈՒԹԻՒՆ ԺՆՆԴԵԱՆ ԵՒ ԴԻՊՈՒԼԺՈՑ
ՄԱՆՈՒԷԼ ՇԵՀԻՆԵԼՆ ԿԻՒՄԻՇԻՆԵՑԻ ՊԵՏՄԵՐԱՆԻՍ
1835 Ի ՍՈՒՐԲ ԽԸ 2 ՎԱՆՍ ՂՐԻՄՈՅ. *)

Երկրորդ գնալն իմ ի Սեւան կղզի.

Իբրև յաջողեցաւ ինձ ի խոր Վիրապու գնալ ի Սեւան կղզի, էր ընդ իս քսաներկու ամեայ պատանի մի Եւդոկիացի Յօհաննէս Պետրոսեան, հաւատարիմ սպասաւոր՝ ոչ մեկնեալ յինէն ի ձախողակս: Ընդ նմին ժամանեալ ի փափաքելին մեր գոհութեամբ զԱստուծոյ, կամ էր մեզ երգել զԴաւթեան զառած, Այս է հանգիստ իմ:

Վասնորոյ ձեռնարկեցաք անդանօր գրել համառօտ, մեզ յայտնեալ ծանօթութեամբք, զսկզբնապատճառս հիմնարկութեանց հրեշտակաբնակ Սուրբ ուխտ Անապատին այնմիկ, և Զառաջին բարեկարգ սահմանադրօղսն երկնաբնակ միաբանութեանն:

Զի թէպէտ ոչ է կարելի այլոց՝ և մեզ ասել, թէ այնպիսի հռչակաւոր ուխտատեղի ծնօղ և դաստիարակ երկնահանգոյն աղօթիկեր պաշտօնատարաց, և ի համբաւաւոր բանասէր Մատենագիր յինքենէ ծնեալ Հոգևոր զաւակաց, որպէս էին Սուրբն Մաշտոց և Յովհաննէս Պատմագիր Կաթողիկոս և այլք ականաւորք, որք ոչ արարեալ իցեն զկանոնական գրութիւն և զմեհնական պատմութիւն Սրբոյ Անապատիս և Միաբանութեանն: Սակայն վասն երկու գլխաւոր պատճառաց, որ նախ ի մշտատե խոնաւութենէ տեղւոյն, թերևս փտեալ և անհետ կորուսեալք են և երկրորդ՝ երթ և եկ այլ վանականք, գուցէ վասն աղաղակութեանց բարձեալ են անտի և միաբանութեանն առաւել աղօթից, քան թէ ընթերձուածոց ունելով զջան, անհոգս եղեալ են ի կուրուսելոցն:

Վասն այնպիսի պատճառանաց, որ յետ բազում հետաքննութեան իմոյ, զոր ոչ կարացի գտանել զցուցակ ինչ և զհիմնական պատմութիւն նոյն Սուրբ Անապատի: Ապա թարթափելով յաբձանագրութիւնս և յաւանդութիւնս ի ծերագունից յաջորդեալսն, և ի զանազան պատմագրութեանց մեզ կարևոր թուելոց, դատաւորեցաք նոր օրագրութեամբ յեկեղեցական Տումար և ի Ժուռ-

*) Տես «Արարտա» 1916 թ. Մայիս-Յունիս էջ 390—395.

նալ նորին վանուց, իբր առիթ յիտազայ բանասիրաց, առ ի բնադարձակել ինքեանց առդիպեալ ծանօթութեամբք:

Գրեցաք և ի Տումարն յայն նախ՝ զառաջին եղեալսն Անապատին, զկալուած, զվիճակ, զգետ, զզարթ, զշարժական և զանշարժ սեփականութիւնսն: Նոյնպէս յինէն յանձնեցեալ Սուրբ Մատեանսն, ըսդ առ ինքեանս մնացելոց միացուցմամբ, Այբբեհական ցանկով և ցուցակաւ դասարկարգեցաք:

Բայց նկատելով, թէ այս ամենայն հոգացողութիւնք, թէ Սրբազումար հարցն նոր բանասիրաց և թէ մերս նուաստութեանց, դարձեալ լինին անօգտակարք վասն յիշեալ խոնաւութեան տեղոյն, ուստի խորհրդակցութեամբ ընդ վանահօրն և միաբանից որոշեցաք կրկնայարկ Առաջնորդարան մի նոր շինել անդ, որոյ վերնայարկն լինիցի օրինաւոր գրքատուն և զգետարան, առ ի յուսալի լինիլ ամբողջ պահպանութեան այնպիսի իրաց: Եւ առ այս ծախուց ոչ ունելով կար և զօրութիւն անընչասէր վանուց և վանականաց, նուաստութիւն իմ, որպէս զգրեանս, զըսգետ և զըստածուածս ի Հոգևոր ծնողէ իմմէ առիս մնացեալսն կամաւ և յօժարութեամբ թողի յայս Սուրբ Անապատ, նոյնպէս ի 1834 ամի Տեառն և յուլիսի 17 աւուր ի Տփլիս քաղաք ետու սրբակրօն Առաջնորդի նոցա Յօհաննէս վարդապետի մէկ հազար արծաթ մանէթ, ստացմամբ ի նմանէ և ի միաբանիցն ձեռագիրս, որք անփոփոխ մտադրութեամբ կառուցեն յանապատին զյիշեալ կրկնայարկ զԱռաջնորդարանն և զԳրքատունն, առ ի պահպանութիւն յուսով աւանդից:

Հրաժարումն Եփրեմ Հայրապետի:

Յետ ձեռնադրութեան Կարնեցի Սերովբէ Եպիսկոպոսի, Արիսողոմասարաս դարանագործքն, հռչակ յարուցեալ ի միաբանսն, թէ Հայրապետն զառամութեամբ իւրով զարժան և զանարժան ներգործութիւնս յարուցանէ, և անծանօթքն խորհրդոց Սերովբէի Եպիսկոպոսին, ըստ քմաց տրտնջէյին ի Հայրապետէն, խորամանկքն խորհուրդ տային զառամելոյն՝ յայտնել բանիւ զհրաժարումն, զի մեղմասցին խստութիւնք բամբասողացն: Այս դարանագործութիւնք ի ձեռն չորից ներգործեցան. Աւագ լուսարար Յօհաննէս Արքեպիսկոպոսի, նորաօծ Սերովբէի, Կատեպանեան Յովսէփ վարդապետի և յատենադպիր Ղրիմեցի Յօհաննէս վարդապետի:

Զառամեալ ծերունի Հայրապետն հետեւելով որսորդաց, երկու թէութեամբ հրաժարումն յայտնէ: Նախ մինչ ի յաջորդ Հայրապետի օժանիլն իշխանութիւն և կնիքն առ ինքն մնալ. և երկրորդ յետ

օծութեան յաջորդին, ինքն լռեալ ի գործոց՝ բնակեացի ի մի կողմն Վեհաբանին: Այս տղայական խոստմամբ հաճեցուցեալ զառամեալն, իսկ և իսկ ծանուցանեն նախարարին ներանու հայազն քնէազ Վասիլ Բէհպուտովին, որ էր ոխերիմ թշնամի ներսէս Արքեպիսկոպոսին, եկեալ նորա յԱթոռն, ի 1830 յուլի[ս] 8, գրեցուցանեն զհրաժարումն զառամեալ Հայրապետին:

Ապա նոր ընտրութեան յաջորդին, անծանօթքն դարանակալութեան, կամին զԱրժանին առաջարկել՝ զներսէս Արքեպիսկոպոսն, Բեհպուտովն ասէ, զնա մեռեալ համարեցէք. և յուղասարաս իբր հաւատարիմն ներսէսի, Կատեպանեան Յովսէփ վարդապետն, առ որ ի գնալն ի Պեղարապիայ իշխանութիւն երկաթեայ գաւազանաւ տուեալ էր ի վերայ միաբանից, ասէ. Մեք մինչև ցայժմ ներսէս Եպիսկոպոսի կամաց և հրամանին հետեւելով՝ Պասկեիչի յաչացն ելաք և ի ներսէս Եպիսկոպոսէ ոչինչ շահեցաք. յետ այսորիկ հչ ունեմք ևս նմա սպասել: Ահա երկաթեայ գաւազանն տուողին, դարձաւ ի գլուխ իւր:

Որպէս նախապատրաստ էր մեքենայն, ընտրութիւն արկին ի վերայ Կարբեցի Աւագ Լուսարար Յօհաննէս Արք Եպիսկոպոսին, առանց ազգային գիտութեան արզի և մահզարի, և առանց ծանուցանելոյ Օսմանեան Տէրութեան մերազնէից և Պօլսոյ Պատրիարքին: Միայն Բեհպուտովն յայտարարութեամբ ծանուցանէ Մեծ Ղրաֆ Պասկեիչին: Եւ զնոյն Յօհաննէս Արք Եպիսկոպոսն այլ օգտակար խորհրդով, առժամայն յատկացուցանեն Առաջնորդ Թիֆլիզու մերազանց ի տեղի ներսէս Արք Եպիսկոպոսի, զի իսպառ ձեռնթափ լիցին ժողովուրդք ի նմանէ. և ի հաստատիլ իւր կաթողիկոս, իբր յայն վիճակէ գնալովն պարզահոգի Ջերմեռանդ արք և կանայք աղբիւր արդեանց բղխեցուցեն յարկեղսն նորընտիր Հոգևոր տիրոջ, որպէս և եղեն իսկ, որ ի տեղւոյ իւրում տես ըստ կարգին:

Մեծ կուսակալ Ղրաֆ Պասկեիչ ցանկացողն ներսէսի անկման, ի ստանալն զյայտարարութիւն քնէազ Բէհպուտովին ի բանակետին իւր ի վերայ Ճառեցի լեռնականաց, փութապէս գրեալ ծանուցանէ առ Նորին Կայսերական Մեծութիւնն, և արդարաքնութեան Նորին զեղանակ տեսցուք զկնի:

Պատճառ ելանելոյն իմոյ ի Սեւանու

Մինչ ի իմոր Վերապ՝ իբր անել բանտի էաք ըստ հոգւոց Սինօթական հարց, որք արգելեալ ևս էին ամենեցուն հչ ոք գրել առ մեզ և հչ ընկալնուլ ի մէնջ զպատասխանիս, այս Աւագ Լուսարար Յօհաննէս Արք Եպիսկոպոսի ընդէմ վճռոյ նոցին երկիցս

գրութիւնքն օրինակեցան ի վերոյ, և այժմեան գրութիւն սորոս առ մեզ ի Սեան կղզին տեսանի արդ: Զկնի այլոց բանից հետեւալն է այսպէս:

«Զգիտեմ ես, զիմորդ նկարեալ պատկերացուցից ձեզ զիմ սիրտ և զամենաջերմեռանդ յարարերութիւն սրտի և հոգւոյ իմոյ առ ձեզ անդստին և այսր, զայս և եթ ասացից, թէ փոխարինութիւն ամեն ինձ ի Տեառնէ եկեսցէ, ըստ սրտի իմում տացէ ինձ Բարձրեալն, որ քննէ զսիրտս և զերիկամունս:

«Ես հանդերձեալ եմ Աստուծով հանդերձ ի մօտալուտ աւուրս եկանել ի ճանապարհ ի Թիփլիզ, և ցաւիմ յոյժ վասն ծերութեանդ մնալոյ յայսմ ձմեռան ի գիճային յայդ տեղի անմխիթար:

«Վասնորոյ անկեղծ հոգւով առաջի Ահաւորին Աստուծոյ թունիմ զվկայութիւն հաւատարիմ, կամելով զի նովին եղբայրական սիրոյ հաղորդակցութեամբ իցէք դուք ընդ իս ի Թիփլիզ Բանդ, վասնորոյ գրեմ ահա ձեզ եթէ բարձրարժանապատուութիւն ձեր կարէք ինքնին ընկալնուլ այդրէն զպիլէթ, ընկալջիք, և շնովաւ օր յառաջ ճանապարհորդեսջիք, քանզի և Արղութեանն Բանդ է յառաջագոյն առաքեալ յինէն, իսկ թէ անկարելի լինի ձեզ ստանալ զպիլէթ, ազգեսջիք ինձ, ես ընկալայց ի կաթուղիկոսէ զբաշորդ և առաքեցից առ ձեզ, և այնպէս կամ յառաջ ընթաց լիջիք դուք և կամ ի միասին ինդ իս, որ չէ անագան, զայս ընկալարուք որպէս ասացի ի վերոյ ըստ ճշմարտին Աստուծոյ ճշմարիտ առաջադրութիւն, և զինչ կամք իցեն ձեզ՝ ընդ գրարբերիս ծանուսջիք մեզ ի միամտութիւն, մնալով իմ միշտ ջերմեռանդութեամբ հոգւոյ առ ի սրտէ բարեաց ձեր սիրօղ, Յօհաննէս Արքեպիսկոպոս:

«Ի 1830, սեպտեմբերի 20, ի Սուրբ Էջմիածին»:

Իմ պատասխանիք առ այս ճրաւէր:

«Զեր Բարձր Սրբազնութիւն, վերատեսուչ Վրաստանու և Բնահանգի նորին հայոց, Ողորմած Տէր: Յամսոյս 20, յանուն Ահաւորին Աստուծոյ Հայրախնամ գրոյդ միտ սերկհանս ծանեայ, և գոհացայ ի նոյն Ահաւորէն, որ տակաւին պահեալ է զեօթն հազարսն, վասնորոյ չունիմ յետ այսորիկ ինձ կամք յատկացեալ, քան զոր կամի Տէրդ և Հայր անուամբ Ահաւորին Աստուծոյ, միայն կրթեմ զանձն իմ ի ծառայել այնպէս, զի համաձայն լիւնցի զիս ի նոյն յորդորող Տեառն և Հօր: Տիվանխանան զնաց տաստի և չէր ինձ հարկաւոր յինէն հետեիլ պիլէթի, ինձ փարելի է պաշտօնս Սրբազնակատար Տեառնս, քան զուկազն Ղրաֆին,

«մատուցմամբ զիմովսանն յարգութիւն յատկացելոց Տեառնդ, «մնամ ձերդ Բարձր Սրբազնութեանդ, Ողորմած Տէր, խոնարհա-
 ւորոյն ծառայ, Մանուէլ վարդապետ: Ի 1830, սեպտմ. 23, Ի դրանէ
 «Արքայութեան, Ի Սեան Անապատի»:

Ահա այսպիսի խնամողական հայրագութ հրամանագրութեան
 վեհանձն իշխանի եղև առիթ ելանելոյն իմոյ Ի Սուրբ Անապատին
 Սեանու, Ի 18-էն հոկտեմբերի, զողջոյն կացջիր բարեաւ Ի խո-
 դաղութեան և յարատև բարեկարգութեան գեոնամած երկրպա-
 դութեամբ և արտասուօք մատուցեալ բարեմասնութեանց ծնօղ
 Սուրբ Անապատին Սեանու և փարանոցափար աղերսիւ ընդ երից
 թշնամեաց՝ բանսարկուին, աշխարհի և մարմնոյ մենամարտկաց:
 Եւ սերտ սիրով առ յԱստուած միացեալ սրբասնունդ Հարց և
 Եղբարց, յանձն առնելով զապառնի ընթացս կենաց իմոց արա-
 զահաս աղօթից նոցին, ունելով զյիշեալ զՆւղոկիացի Յօհաննէս
 դպիրն, ընկերակցութեամբ և վանահայր Յօհաննէս վարդապե-
 տին, որ գնայր Ի Տփլիս, վասն իւր հարկաւորութեան Անապա-
 տին: Ելեալ իմ Ի քաղցր փոքրիկ ծովակէն Գեղամայ, նոր Ի նորոյ
 մտի Ի դառն և յանուռն ծով աշխարհի ալէկոյտ վտանգաւոր զբա-
 ղանաց, ժամանեալք Ի քառանթինն կէռկէռ ասացեալ տեղոյն,
 ուր յետ երից աւուրց և ինքն նորընտիր Հայրապետ և Սրբազան
 Առաջնորդն Յօհաննէս իւրովքն հնաս բերելով ընդ իւր և զհոգ-
 ւով սիրեցեալն իմ, զՄսուր դպիր Գրիգորեան զՄիւռինացի,
 զորմէ լինի գրել հետեապէս:

Ընդ զօրութեան գրութեանցն, առ ժամս Հայրական սիրով
 ընկալեալ զմեզ նորընտիր Տեառնս, Ի միասին մուտ գործեցաք,
 Ի 1830 և Ի ըսկիդրն նոյեմբերի Ի Տփլիս:

Երկրորդ ընտրութիւն նոր Կաթողիկոսի.

Ըստ նախածան գրեցելոյ, առաջին համառօտ ընտրութեան
 համբաւ հասեալ Ի սուրբ լսելիս նորին Կայսերական Մեծութեան,
 Ի կարծիս եղեալ յայնպիսի անպատճառ հրաժարեցման Եփրեմ
 Հայրապետի, և Ի բաց թողլով զՆերսէս Արքեպիսկոպոսն, յառաջ
 ածել զՅօհաննէսն: Քանզի զկնի գնալոյ Ներսէս Արքեպիսկոպոսի
 Ի Պէզարապիայ, Եփրեմ Հայրապետն յատուկ խնդրամատոյց եղև
 առ Կայսրն, զիւր զառամութիւն պատճառելով, խնդրէր վերա-
 դարձուցանել զՆերսէսն, զի օծեալ Ի տեղի իւր կացուցմամբ,
 ինքն հանգստութիւն գտցէ: Առ որ յայնժամ հրամայեաց Կայսրն,
 Ի կենդանութեան քում բաւական է կառավարութիւն քո, յետ
 վախճանիդ՝ կառաւարութիւնն կարէ զարժանաւորն տնօրինել:

Եւ յետ այսուհետեւ առարկութեանց, վերակրկնեալ Հրաժարումն կարծեաց տեղի տալով, հրաժայեաց արդարաքննին սուրբ Կայսրն նոր ընտրութեամբ հռչակեալ յայտնեացի այնպիսի հրաժարումն Հայրապետին: Առ այսպիսի դիպուածս է պաշարումն հօգորագունից, որք պարաւանդին գործունեայ կառավարչաց, անդիտացեալ և զնոցին կրից ի դէմս ոմանց, թէ և ինքեանք ցանկան արդարութեան փառաց:

Յընկալնուն Դրաֆ Պասգեիչի զայն բարեհաճութիւն, նախահողաց լեալ, մի գուցէ եփրեմ Հայրապետ զգաստացեալ փոխարկեացէ զբանս իւր, խորհեալ ի զհետ նորընտիր Հայրապետի, յառաջընթաց առաքեն զոխերիմ թշնամին Ներսէս Արքեպիսկոպոսի՝ զԿարնեցի Սերովբէ յիշեալ եպիսկոպոսն, բազում ընծայիւք, որպէս եփրեմ Հայրապետին պատուական սամուր մուշտակ, ոսկեայ ժամացոյց և հինգ հարիւր ոսկի, նոյնպէս ալ եպիսկոպոսաց և գործօնեայ վարդապետաց՝ ոմանց մուշտակ, ոմանց կերպասեայ վերարկու, ալոց ժամացոյց և փող. այսպիսի խայծիւ ձկան ընդարմացուցեալ զամենայն, յամսեանն փետրվարի, նոր ի նորոյ Հայրապետական կոնդակ գրեցուցանեն եփրեմ Հայրապետին առ յայնկոյս Կովկաս լերին յԱրարատեան աշխարհ եղեալ վիճակաւոր եպիսկոպոսաց, և վարդապետաց՝ զալ ժողովիլ մինչ ի մարտի 13-յԱթոռն, զի ընտրութիւն Հայրապետի ունի լինիլ անպատճառ ի 15 նոյն մարտի:

Յետ այսպիսի նախապատրաստութեանց, յորժամ և Կարնոյ վիճակի Կարապետ Արքեպիսկոպոսն էր ի Տփլիս, նախապատրաստ Հայրապետացուն աւետէ զնա, և զՄինաս եպիսկոպոսն սալլու կարգացեալ, ի 27 էն փետրվարի զիմեն հասանիլ յԱթոռն և զբարեկենդանն ի Շուլաւէր գիւղն առնեն:

Թողուն ի Տփլիս կառավարիչ զմերս նուաստութիւն, ընդ Ստեփաննոս Արղութեանց վարդապետի, և յատենակալ Մսուր դպրի: Ժամանեալ նոցա յԷջմիածին, ի 1831, մարտ 15, ի ներկայութեան ևս Երեանու նախարար քնէազ Վասիլ Յովսէփիչ Բէհպուտովի, և հարկիւ ժողովեալ արանց, առնեն իւր արդարացի զընտրութիւնն ըստ հետեւեալ օրինակի:

Էր յայնժամ յԱթոռն Տեղապահ կոչեցեալ Մարտիրոս եպիսկոպոս մի ութսունամենիւք, և կաթուածահար: Երկիջեան գծեալ անդիր թուղթ մի արկանեն յատեան ժողովոյն գրեալ իւրաքանչիւր կողման մէն մի բառ, Տեղապահ Մարտիրոս Արքեպիսկոպոս: Աւագ լուսարար Յօհաննէս Արքեպիսկոպոս: Եւ ասեն նախագահքն, յոր կողմն կամիք, յայն կողմն և նոյն անուան ներքոյ ստորագրեցէք:

Ակներե տեսեալ ամենեցուն թէ ինչ են կամք հօրագունից, զի թէ Եփրեմ Հայրապետն նուազեալ ի տեսութեանց և ի լսելեաց, բայց զօրիլ ի կազմուածս ոտից և ձեռաց, նաև զգօնութեամբ մտաց, որպէս զերիտասարդ, իսկ Մարտիրոս եպիսկոպոս ըստ ամենայնի որպէս ի կենդանոյն մեռեալ, որ և յառաջ քան զլրութիւն այս առարկութեան վախճան կենաց նմա հասեալ, և Եփրեմ Հայրապետն այլ ևս զկնի հրաժարեցմանն ապրեցաւ չորս ամ:

Ուստի դաստիարակեալ ժողովն, ստորագրեալք ի ներքոյ անուան Աւագ լուսարար բառի, և թափեալ զօձիսն գնան ի տեղիս, որպէս և կրկնտիր Սրբազանն մեր, ընդ Կարապետ, Սերովբէ և Մինաս եպիսկոպոսաց եկին ի Տփլիս:

Իսկ նախարարն Բեհպուտով, քանի թերթս օրինակեցուցեալ, տայ ի ձեռս արքունի աստիճանաւորաց՝ շրջիլ ի մերձակայ քաղաք և գիւղսն ստորագրեցուցանել, որպէս ի ժողովին և ամենեցունցն ստորագրեալ թուղթ հասեալ առ Ղրաֆն ի կատարումն հաճութեան իւրոյ:

Յաւուրսն յայնոսիկ աստամբեալ կառաւարութիւնն Լեհաստանի ի Տէրութենէն Ռուսաց, հրաւիրի Երեանու Ղրաֆ Իւան Ֆէարիչ Պասկեիչն գնալ՝ աստիւ խրատել զնոսա: Այս դիպուած յաջողակ պատահեալ ընտրեալ Հայրապետի, որ Ղրաֆն անձամբ անձին տարեալ մատուցանէ Սուրբ Կայսերն: Եւ նորին Կայսերական Մեծութիւն, ի հաճոյս Ղրաֆին, հաստատէ ստորագրութեամբ իւրով ի 1831, յունիսի 30:

Իսկ թէ ի 1830 և ի նոյեմբերի մէկէն Առաջնորդական Անուամբ ի Տփլիս ինչ ինչ գործեցան, աստանօր յիշեցուք, զի մի ընդ Հայրապետական ժամանակի պատկանելեաց յիշեցմամբ՝ շփոթումն բանից գրչիս, և տարակուսութիւն մտաց ընթերձանաց առբերցեն:

(Շարունակելի)

